ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

Աշխարհաժողով — Պոլիսի ազատ քաղաքացիներից կազմված ժողովրդական ժողովը՝ գերագույն օրենսդիր մարմինը

Ասպետ — միջնադարյան Արևմտյան Եվրոպայում մանր ավատատեր, որը չուներ ժառանգական տիտղոս և սեփական վասալներ **Գաղութ** – Այս դեպքում եվրոպացիների կողմից նվաճված երկրներ Ասիայում, Ամերիկայում և այլուր

Արդյունաբերական հեղաշրջում — Անցումը ձեռքի աշխատանքից մեքենայական աշխատանքի, որի ընթացքում առաջանում են արդյունաբերական բուրժուազիան և բանվորությունը

Արքայական ճանապարհ — Հին աշխարհի հայտնի առևտրային ճանապարհ

Բուդդայականություն — Աշխարհի հնագույն կրոններից է: Հիմնադիրն է Սիդհարթա Գաուտաման, որը հայտնի է «Բուդդա» անունով

Բուրժուազիա (լատ. բուրգ՝ քաղաք–ամրոց, քաղաքացի) — Կապիտալիստների դասակարգը

Գաղութ — Այստեղ՝ որևէ պետության իշխանության տակ գտնվող երկիր, որը զրկված է ինքնուրույնությունից և ազատ զարգացման հնարավորությունից

Գլադիատորներ — Հանդիսականների առջև նրանց զվարճանքի համար միմյանց դեմ մարտնչող ստրուկներ: Բառացի նշանակում է «սուսերակիր»

Դաոսականություն — Փիլիսոփայական ուղղություն, ըստ որի՝ ներդաշնակության աղբյուրը տիեզերքն է:

Դեմոս—Ժողովուրդ, Հին հունական պոլիսի լիիրավ քաղաքացիներ

Դիկտատոր — Սենատի կողմից արտակարգ իրավիճակներում ժամանակավորապես նշանակվող և անսահմանափակ իշխանությամբ օժտված անձ, պաշտոնյա Հին Հռոմում

Դոմինատ — Դիոկղետիանոս կայսեր ստեղծած միանձնյա կառավարման համակարգը

Ջիկկուրատ — Ուղղանկյունանիստաձև բազմաստիճան վեր խոյացող կառուցվածքով պաշտամունքային շինություն Հին Միջագետքում

Ինդուլգենցիա — Կաթոլիկ եկեղեցու կողմից տրվող մեղքերի թողության վկայական, որը գնելով՝ մարդն իբրև թե ազատվում էր իր գործած մեղքերից

ինկվիզիցիա (լատ. inquisitio, քննություն, ռուս.–ից) — Հոգևոր դատարան հերետիկոսների և այլահավատների դեմ, որ պապերը հիմնեցին XII դարում, տևեց մինչև ԺXIX դ. սկիզբը: Ինկվիզիցիայի գործերը վարում էին դոմինիկեան կրօնաւորները: Ինկվիզիցիան հարյուր հազարավոր

մարդկանց կենդանի այրեց:

Ծերակույտ — Տոհմերի ավագներից կազմված խորհուրդ:

Կամիկաձե — աստվածային քամի. այսպես են ճապոնացիներն անվանել մոնղոլներից իրենց փրկած ծովամրրիկը (թայֆուն):

Կապիտալ — Հարստություն, ունեցվածք, գումար, որը նրա տիրոջը՝ կապիտալիստին, գործարարին շահույթ է բերում

Կոնկիստադոր — իսպաներեն նշանակում է նվաճող. այդ անունով են հայտնի Ամերիկան նվաճած և գաղութի վերածած իսպանացիները

Կոնսուլ — Պետական բարձրագույն գործադիր պաշտոնյա

Հաղթակամար —Հին Հռոմում Նշանավոր իրադարձության պատվին կառուցված կամարակապ դարպաս:

Հելլենիզմ, Հելլենականություն — Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով սկսված դարաշրջան:

Հելոտ — Սպարտայի պոլիսի անազատ բնակչությունը

հերետիկոս — Եկեղեցու ընդունած դավանքին հակառակ դավանանք, որ ընդունում և քարոզում էին հերետիկոսները: Եկեղեցին դարերով մաքառել է տեսակ-տեսակ հերետիկոսությունների դեմ

Հիերոգլիֆ — Գրի հնագույն տեսակ՝ գաղափարագիր: Առաջացել է Եգիպտոսում Ք. ա. IV հազարամյակի վերջին

Հումանիզմ (լատ. humanus՝ մարդկային բառից)—մարդասիրություն, մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանություն: Վերածնության դաշրջանում ծագած շարժում, որ հռչակում էր մարդկային անհատականության ազատ զարգացման և ֆեոդալական ու կաթոլիկական կաշկանդումներից մարդու ազատագրման սկզբունքը

Մանուֆակտուրա — բառացի նշանակում է «ձեռքով պատրաստված»: Աշխատանքի բաժանման և տեխնիկայի օգտագործման վրա հիմնված մեծ ձեռնարկություն

Մերկանտիլիզմ (առևտրականություն) — Ծագում է լատիներեն «շուկա», «առևտուր» բառերից: Նպատակն է արտադրել շատ և որակյալ ապրանք: Այդ դեպքում երկիրն ավելի շատ ապրանք է արտահանվում և ստանում մեծ շահույթ:

Նիրվանա — Սանսկրիտից թարգմանաբար նշանակում է մարել, հանգցնել կրակը

Նոմ-Եգիպտոսի վաղագույն առաջին խոշոր բնակավայրերը, որոնց հիման վրա ձևավորվեցին առաջին քաղաք-պետությունները՝ առաջին պետականությունները և դրանց երկրագործական շրջանները

Պատրիկ — Տոհմային ավագանու ներկայացուցիչ

Պետական մենաշնորհ — Մեծ պահանջարկ վայելող ապրանքների արտադրության և իրացման գործում պետության բացառիկ իրավունք

Պլեբեյ — Վաղ Հռոմում քաղաքացիական իրավունքներից զուրկ բնակչությունը:

Պոլիս — Հին հունական ինքնիշխան քաղաք–պետություն

Պրինցիպատ — Հռոմի պատմության Վաղ կայսրության շրջանի անվանումը

Պրովինցիա — Հին Հռոմի Նահանգ: Լատիներեն նշանակում է «պարտված երկիր». Հռոմի կողմից բռնակցված երկրները:

Ռենեսանս — Վերածնունդ՝ Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրների զարգացման՝ միջնադարյան մշակույթից նոր ժամանակի մշակույթին անցնելու դարաշրջան: Ընդգրկել է XIV–XVII դդ.:

Ռեֆորմացիա (վերափոխում, բարեփոխություն) — հասարակական–քաղաքական և կրոնական շարժում Եվրոպայում, որի նպատակը եկեղեցու վերակառուցումն էր

Սամուրայ — հատուկ դասի պատկանող ռազմիկ:

Սյոգուն — զինվորական առաջնորդ. նրան էր պատկանում իրական իշխանությունը Ճապոնիայում, ավելի հզոր էր, քան կայսրը:

Սպարտիատներ — Սպարտայի պոլիսի լիիրավ քաղաքացիները:

Վանդալիզմ — կանխամտածված կերպով մշակութային և նյութական արժեքների ոչնչացում

Վարնա — Հնդկաստանի բնակչության չորս առանձնացված դասերի անվանումը. կոչվել են նաև կաստա

Տիրան —Բռնակալ. Հին Հունաստանում բռնի ուժով իշխանությունը գրաված, միանձնյա կառավարիչ

Ուտոպիա — Իրականության իդեալական, այսինքն՝ չեղած, բայց ցանկալի պատկերը: Բառացի նշանակում է՝ «տեղ, որ գոյություն չունի»

Օղուզներ — թյուրքական ցեղեր, որոնք ապրում էին Կենտրոնական Ասիայում

Օստրակիզմ — Աթենքում կիրառվող օրենք, որի նպատակն էր քվեարկության միջոցով երկրից տասը տարով վտարել ժողովրդավարության համար վտանգ ներկայացնող քաղաքացիներին